

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 2
19 հունվարի 2018 թվականի

ՀՊՏՀ նոր ռազմավարություն մշակելու մասին

Լսելով և քննարկելով «ՀՊՏՀ նոր ռազմավարություն մշակելու մասին» հարցը (զեկուցող՝ ՀՀ փոխվարչապետ, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի նախագահ **Վաչե Գաբրիելյան**)՝ համալսարանի խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հանձնարարել ռեկտորատին.

- 1. Հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգում առկա և սպասվող մարտահրավերները և գերնպատակ ունենալով կրթության որակի բարձրացումն ու ֆինանսական կայունության շարունակական ապահովումը՝ մշակել նոր ռազմավարություն՝ կարևորելով հետևյալ միջանկյալ նպատակները.**
 - վերլուծել ակտիվների օգտագործման արդյունավետությունը,
 - խոշորացնել ֆակուլտետները և ամբիոնները,
 - հստակ ձևակերպել յուրաքանչյուր խոշորացվող ուսումնական ստորաբաժանման կադրերի երիտասարդացման գործընթացն ու կառուցակարգերը,
 - մշակել անհատական կրեդիտային կրթական ծրագրերով ուսուցմանն անցնելու ռազմավարություն կամ տեխնոլոգիա,
 - կարևորել հետազոտական կենտրոն – ամբիոն կապը, որտեղ հետազոտական կենտրոնները կլինեն հիմնականում վարչական բնույթի՝ մեկ կամ երկու ղեկավարով և ամբիոնների դասախոսները պարբերաբար կընդգրկվեն հետազոտական աշխատանքներում,
 - ընդլայնել ուսանողներին մատուցվող ծառայությունները,

7. հստակ ցուցիչներ սահմանել ֆակուլտետների և ամբիոնների չափերի, ինչպես նաև ուսանող-դասախոս, ուսանող-ոչ դասախոսական աշխատակից հարաբերակցությունների համար,
8. սահմանել կույր գնահատման համակարգ հնարավորինս շատ դասընթացների համար,
9. շեշտադրել հրապարակումները՝ հաշվի առնելով պարբերականների ազդեցության գործակիցը,
10. ներդնել «Մուդլ» (Moodle) համակարգը,
11. ստեղծել առցանց ռեսուրսներ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի համար:

2. Որոշման կատարման համար սահմանել եռամսյա ժամկետ:

Խորհրդի նախագահ՝

Վաչե Գաբրիելյան

2018 թ. հունվարի 19
Երևան